

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՏԱԽՈՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ԿԵՆՏՐՕՆՆԵՐԸ.

Փ Ա Ր Է Զ.

(Ծ-բ-ն-ի-ն-ի-ն ք-ե- Ա-բ-բ-ը Բ-ե- է.)

Բայց ի՞նչ տարերքից է բաղկանում ներկայ ժամանակումս Լեզիտի միստական կուսակցութիւնը, Խորթ է թվում ասել, բայց, նա մեծ մասամբ բաղկանում է բուրժուական տարերքից, Յուլիսեան միապետութեան և երկրորդ կայսերութեան ժամանակամիջոցին այս կուսակցութեան ամենապերճախօս ատենաբանն էր Բերրըէ, փաստաբան և բուրժուա ծագումով, Ազգային ժողովի մէջ այժմեան դէպուստատների մեծամասնութիւնը նոյնպէս պատկանում է բուրժուա դասին, Յատկապէս ցլեղափոխական ազնուականութեան յաջորդները աննշան խումբ են կաղմում, ոչ այնքան ազդող, որքան պարծենկոտ վարագործող իրանց առանձնացած դրութեամբ, իրանց ազնուապետական պահանջներով, իրանց խորթութեամբ դէպի ժամանակակից կենդանականը, ժամանակիս պահանջների անհասկացողութեամբ, և իրանց յետադիմութեամբ:

Այս կեանքից դադարող ֆրանսիական ազնուապետութեան մնացորդները երևում են ոչ աւելի քան հասարակական և քաղաքական անախրօնիզմ⁽¹⁾, պատմութեան և յառաջդիմութեան օրէնքները չընդունող, Ամենից աւելի տեսնելու և լսելու արժանի, ամենից աւելի ամբողջ օրինակները կեանքից դադարող այդ ազնուապետութեան կարելի է գաւառումը պատահել, Այն տեղ իւրեանց օտէլներում⁽²⁾ և ամբոցներում, նոքա ապրում են կատարեալ առանձնութեան մէջ՝ հեռի ուրիշ հասարակութիւնից, յարաբերութիւն չունին բուրժուայի հետ, ունին իրանց խոստովանահայրերը, հասարակական գործերում չեն մասնակցում, իրանց խոստովանում են Հենրիկոս Խ. օրինաւոր հպատակ, և պարզապէս օրինաւոր կառավարութիւն չեն ճանաչում, Փարիզումը այդ ազնուապետութիւնը կորցրել է իւր սաստիկ սահմանաւորուած, որոշիչ յատկութիւնները, բայց իսկապէս ապրում է արեսենդէիզմի⁽³⁾ մէջ, Փարիզի ազնուապետական թաղը համարվում է Սեն — Փերմենի արուարձանը, որ գտնվում է Սենա գետի ձախ եզերքում:

(1) Անախրօնիզմ. Յուն. նշանակում է ներկայ ժամանակի անպատշաճ ընթացք.

(2) Ոտել. տեղական բառ է. որ նշանակում է մասնաւոր պալատ. ընդարձակ հիւրանոց.

(3) Արեսենդէիզմ. Լատ. Այս բառը նորահմար է. նշանակում է ստատիկ սէր կամ ձգտումն դէպի ճանապարհորդութիւն եւ առանձնապէս սովորութիւնը հարուստե-

լատինական թագին կից, Այն տեղ տխուր, անմարդարնակ փողոցների մէջ, դուք կարող էք պատահել ազնուապետական օտէլների, այն տեղ բնակում են այդ վերջին ներկայացուցիչները ֆրանսիական այն փայլուն ազնուականութեան, որ կործանեց Բուրբոնների ֆրանսիական միապետութիւնը:

Բայց այնու ամենայնիւ մինչև ցայժմ համարում է իւր անձը նեցուկ այդ միապետութեան, Ապրելով հետի հասարակական գործերից, նոքա գործնով պակաս չեն ապրում Փարիզեան աշխարհային կեանքով, կազմում են առաւել ընտիր, պատուական հասարակութիւն, և տալիս են բոլոր Փարիզին քաղաքավարի ընթացք, Այսպէս, այս հզօրագոյն ազնուապետութիւնը, որ երբեմն դարձնում էր թագաւորութեան բախտը, փոխուել է այժմ սոսկ հասարակութեան ընտիր մարդկանց, որոնք տալիս են ժամանակակից Փարիզին ընթացք և նորաձեւութիւններ (Мода): Sic transit gloria mundi! (Այսպէս է անցնում աշխարհի փառքը):

Իսկական, ժամանակակից ֆրանսիայի կառավարչական գասը, ի հարկէ, բուրժուազեան է: Ստանալով իւր նշանակութիւնը և տիրապետող դրութիւնը առաջին յեղափոխութեան (революция) պատճառաւ, որ կերպարանափոխեց ֆրանսիայի պետական և հասարակական բոլոր կազմուածքը, բուրժուազեան ըստ անհրաժեշտութեան երեւում է ազատամիտ տարր. նա դաւանում է «սկզբունքը 1789 թուականի», նա պաշտպանում է ազգային ժողովը և սահմանադրութիւնը, նա անուած է «Ազտերականութեամբ», դէպի կղերիկոսները լծերահաւատութեամբ է վերաբերվում, այդ բնական Ազգիաբնակների դաշնակիցներին՝ և չի հրաժարուի «ֆրոնդա» կազմելու, երբ տեսնում է դորա մէջ իւր համար շահ: Գործնով ժամանակակից բուրժուազիայի քաղաքական սկզբունքը ոչ պակաս անհաստատ են և անկայուն: Իւր քաղաքական տիրապետութիւնը ապահովելու տրնելով, շահասացութեան նպատակով ցանկացող է արուեստների և վաճառականութեան ծաղկելուն, փարիզեան բուրժուան պատրաստ է պաշտպանել միատեսակ «Լօնայականութեամբ»*) ամեն մէկ կառավարութիւն, միապետութիւն Բուրբոնների կամ Օրլէականների, կայսերութիւն կամ հասարակապետութիւն, միայն թէ այդ կառավարութիւնը դաշնակից լինի բուրժուազիայի հետ, միայն թէ նա բուրժուական իրաց կարգերի վերայ հանգչի: Դաւանելով «մեծ սկզբունքները 1789 թուականի» և յայտնի տեսակի չափաւոր ազատամտութիւն, որը կարելի է անուանել բուրժուական, փարիզեան բուրժուազիան միեւնոյն ժամանակ փաստօրէն չափազանց պահպանողական է (консервативный), և շատ

րի, որոնք հայրենիք թողած ճանապարհորդութիւններ են անում ապրելով Իտալիայում, Ֆրանսիայում եւնւ:

(*) Լոնայականութիւն, ըստ Գաղղ. նշանակումէ օրինաւորութիւն, Ծ. Թ.

անգամ պաշտպանումէ յայտնի ըէժիմը (կարգադրութիւն), ոչ այն պատճառով որ այդ ըէժիմը համապատասխան է նորա քաղաքական իդէալներին, այլ այն պատճառով, որ յայտնէ ամուր սահմանադրած իրաց կարգը, միշտ աւելի օգտաւէտ է բուրժուայի համար, քան թէ յեղափոխական շարժումը, որ վնաս է բերում վաճառականութեան և արուեստներին։ Այս հիման վերայ, գլխաւորապէս բուրժուազիան այնքան երկար միջոց պաշտպանումէր երկրորդ կայսերութիւնը։

Եւրոպայում և մինչև անգամ Ֆրանսիայում սովորել են կարծել, թէ մանր բուրժուազիան — առաւելապէս պահպանողական տարր է։ Սորանում ի հարկէ կայ ճշմարտութեան մասը, Ի հարկէ ամեն մէկ բուրժուա պահպանողական է և նորա աղատամտութիւնը մէջանական իդէալից առաջ չի գնում, սահմանադրական միապետութեան, որի մէջ սեպհականութիւնը կըլինէր ապահովուած, զրամագլուխը կրպակահանութիւնը, վաճառականութիւնը և արուեստահանութիւնը (промышленность) կըշահուէին ազատութեամբ։ Բայց մէջանական միապետութիւնը — միայն *pia desideria* բարեպաշտ ցանկութիւն է բուրժուականութեան, վասն զի բուրժուականութիւնը, ինչպէս մենք ասացինք պատրաստ է ամեն մէկ կառավարութեան զիջանիլ, միայն թէ այս կառավարութիւնը ապահովէր նորա իսկական տնտեսական շահերը։ Այս հիման վերայ, Բուրժուազիան հաշտուեց երկրորդ կայսերութեան հետ։ Երբ միայն համոզուեց, որ երկրորդ կայսերութիւնը բոլորովին առաջնոյ շարունակութիւնը չէ և թէ նորա բնաւորութեան մէջ չըկայ պատերազմական բոցափառ եռանդ։ Բայց հաշտուելով նորա հետ, բուրժուազիան բոլորովին չըթողց իւր ազատամիտ ձգտումները և ղէպքը գալու ժամանակ՝ սակաւ դժուարութիւններ չէր պատճառում կառավարութեան, որը պարտաւորվումէր ականոյ զիջումներ անել, Իսկ ինչ կըվերաբերի յատկապէս մանր բուրժուային, նա բոլորովին այնպէս պահպանողական չէ, ինչպէս սովորաբար կարծում են։ Վարելի է հաստատութեամբ ասել, որ Փարիզի մանր բուրժուան — չափազանց յեղափոխական (революционный) տարրն է յայտնի պայմաններում, և ամենավտանգաւոր, վասն զի նորանով շարժում են կրպակաւորների և վաճառականների նիւթական շահերը։ Այսպիսի իսկ պայմանները տիրապետում էին Վոմուշայի նախընթաց օրը։ Շարունակ պատերազմը և Փարիզի հնգամեան պաշարումը իսպառ քարուքանդ արին մանր բուրժուային, որը ինչպէս յայտնի է ապրումէ *au jour le jour*, օրական վաստակով, սնուելով անցեալ աւուր ձեռքերեւածով և յուսալով վաղուեան վաստակի վերայ, Փարիզեան մանր առևտրականը և կրպակաւորը, ըստ մեծի մասին, խնայողութիւններ չէ անում, այն հասարակ պատճառաւ, որ խնայողութիւն անելու բան չըկայ և սպիտուած է քանք անել միայն այն մասին, որպէս զի ծայրը ծայրին հասցնի։ Այժմ երևակայեցէք օւրեմն զրութիւնը այդ կրպակաւորի Փարիզի պաշարման մի-

ջոցին, Ապրուստը ոչ թէ կրկնակի, այլ տասնապատիկ թանկացաւ, առուտուրը դադարեց, ապրանքների արտահանութիւնը անհետացաւ, եթէ ենթադրենք թէ նա ունէր որ և իցէ ինչ ինայողութիւնից յետ ձգած, բայց հաւանական է, որ երկու ամսուայ պաշարման միջոցին այն կերել՝ վերջացրել է: Ի՞նչ էր մնում նորան անելու: Նա էլ գնաց ազգային թիկնապահ զօրքի մէջ զինուոր գրուեց, որ ստանումէր օրական մէկ ֆրանկուկէս: Այդպիսի զինուորներից և մշակներից, որոնք նոյնպէս անգործ էին մնացել, կազմուեց այն հինգ հարիւր հազար զօրքը, որոնք պաշտպանումէին Փարէզը, եթէ նոր կառավարութիւնը, որ կազմուեց Բօրգոսսեան ազգային ժողովեց, գործէր հմտութեամբ և զգուշութեամբ, եթէ գոնէ իմանար մերձաւորապէս Փարիզի մէջ իսկական գործերի դրութիւնը, այն ժամանակ նա հեշտութեամբ կարող կրէինէր օգուտ քաղել այդ տարրից և ձգել նորան իւր կողմը: Բայց մեծամասնութիւնը պալատի (օրէնսդրական ժողովի) և ինքը իսկ կառավարութիւնը, հենց առաջի օրից կատարելապէս կորցրին իրանց ուշու-միտքը, և քաղաքական կրքերը, ճնշուած պատերազմական անցքերով, միանգամից յանկարծ բորբոքուեցին՝ երբ բարեպատեհ թուեցաւ ժամանակի բերմունքը: Մեծամասնութիւնը օրէնսդրական ժողովի հնազանդելով, ձգեց անձը անմիտ րէակցիայի մէջ^{*)}, չըջապատելով Փարէզը հարստահարական միջոցներով և մանր բուրժուայի գոյութիւնը բոլորովին անկարելի դարձնելով: Այդ ժողովը օրինագրեց դադարեցնել մէկուկէս ֆրանկ օրական ռոճկադրամի տուչութիւնը ազգային թիկնապահներին: Հարցնվումէ թէ ինչով պիտի ապրէին նոքա առանց այդ ռոճկի, գործի չըլինելութեան և արուեստանոցներում գործունէութեան դադարման ժամանակին:

Յետոյ չըբաւականալով դորանով, օրէնսդրական ժողովը ձայների մեծամասնութեամբ օրինագրեց յայտնի օրէնքներ. ժամանակը անցրած մուրհակների և տների վարձի վճարման մասին, Այս զրեց մանր բուրժուային ո՛չ միայն դժուար դրութեան, այլ ֆիզիքապէս անհնարութեան մէջ, ինչպէս կարողանար վճարել մանր բուրժուան ժամանակը անցրած տների և պարտամուրհակների համար այն միջոցին, երբ նորան և ընտանեացը սնունդ տալու բան չըկար: Ահա ինչու համար մանր բուրժուան ո՛չ միայն արգելք եղաւ 18 Մարտի խռովութեանը, այլ ինքն նորան ստեղծեց, միաբանուելով մշակների հետ, որպէս զի ստիպի Թիերի կառավարութեանը և ազգային ժողովին անել, գոնէ, ինչ ինչ զիջումներ և վերահաստատել այն քաղաքային ազատութիւնը, որ այդ զէպքում, ներկայացնումէր վաստակի ապահովութիւն: Եթէ յետոյ, երբ հաշտուելու փորձերը երեւցան անկարելի, կոմունան

(*) Բէակցիա՝ Լատ. ընդդիմադրոճութիւն, դիմակալութիւն, Ամէն բան, որ հասցնումէ մինչեւ չափազանցութիւն, բէակցիա է յառաջ կոչում:

մինչև յայտնի աստիճանի փոփոխեց իւր սկզբնական նշանակութիւնը, և երևեցաւ ինչպէս ինքնակայ կառավարութիւն, օրինաւոր համարելով իրան, ուրեմն այդ բնականապէս բղխումէր նոյն իսկ գործի գրութիւնից, և այս գէպբումը, կոմունայի յանցանքը պարունակվում է միայն նորանում, որ նա ըստ կարեւորութեան պարտ էր մատնուիլ ճակատագրական յեղափոխական շարժման, որ չի կարող դադարիլ և ստիպում է տրամաբանօրէն հետևել ընթացքին, որ մէկ անգամ տուած է իմպուլսից:

Այս հանգամանքում մանր բուրժուան դաշնակցութեան մէջ մտաւ մշակ գոտի հետ, որ ներկայացնում է առաւելապէս սոցիալիստիքական տարր: Փարիզի Մշակը 1848 թուականից ի վեր, յիրաւի, նշանաւոր աստիճանի, սոցիալիստ է երևում, որ հեշտ կարելի է բացատրել չափազանց անշահ և հարստահարական պայմաններովը, որոնցով շրջապատած է վաստակը Ֆրանսիայում: Բայց քիչ անգամ է պատահում, որ Փարիզի մշակը ջանք է անում բուրժուա դառնալ, տէր լինել և գտնել իւր նախկին ընկերներին: Փարիզի մշակը, ինչպէս և բոլոր մնացած Փարիզի բնակիչները, պահպանել է իւր — փարիզեցու նախատիպի առանձնայատկութիւնները, — սրամտութիւն՝ միացրած թեթեւամտութեան հետ, ծարաւի գէպի զուարճութիւնները, վերին աստիճանի սնափառ: Այդ սնափառութիւնը ստիպում է պարոնի և աղնուականի դեր խաղալ: Թաճախ և կարգով Փարիզում դուք յաճախակի և աստիճանաբար կը հանգիպէք չափաւոր բուրժուաների, որոնք ձեռք են բերել իրանց համար կարողութիւն վաճառականութեամբ և գնել են իրանց համար հողի կտոր այն դիտաւորութեամբ միայն, որ հրաժարուին իրանց նախնական բուրժուական ազգանունից և անուանուել գնած հողի անունով՝ դեռ մասնիկ աւելացնելով: Այսպէս, դուք շատ անգամ պատահում էք մի որ և իցէ Դիւրանի, որ մի գեղեցիկ առաւօտ փոխուել է Մօնսիեօր դեօ Պիերրեֆօնի Monsieur de Pierrefonds, որը թէ քաղցրահնչիւն է և թէ ազնիւ: Սեն—ժերմենեան այժմեան աղնուականները, ի հարկէ արհամարհանքով են նայում պոսպիսի նոր թխած աղնուականների վերայ, որոնք իւրեանց կողմից նորանով են հանդարտվում, որ ատու մին այդ vieux gânachés ձեր անխելքներին:

Բայց այս դասական բաժանմունքը և այս դասական անտազօնիզմը *) (антагонизмъ) խառնվում են ահագին փարիզեան բնակիչների ծովի մէջ: Այս բնակիչները գլխաւորապէս բաղկանում են արհեստաւորներից, գաւառացի ուսանող երիտասարդութիւնից և օտար երկրացիներից: Այս բաժանմունքը աւելի ճիշտ են և իրական քան դասական ստորաբաժանութիւնները, որոնք ժւնեն միայն շատ պայմանական բնաւորութիւն: Ինչպէս Փարիզի արհեստաւորները — բուրժուան, ներկայա-

(*) Антагонизмъ անտազոնիզմ. յուն. հալածումն որ եւ իցէ կարծեաց:

յնումէ հասարակական կարգի և խաղաղ աշխատանքի տարր, նոյնպէս փարիզեցի ուսանողը ներկայացնումէ անկարգ կեանքի և փարիզեան դուարձութեան տարր: Ահագին քանակութիւնը ուսանող երիտասարդութեան առանձին բնաւորութիւն է տալիս Լատինական թաղին, ուր կետրօնացած են բոլոր բարձրագոյն մասնագիտական դպրոցները: Այս թաղը առանձնակերպ է, խոռովայոյզ բնակիչներով, անսովոր հագուստներով, իւրատիպ գոգօթներով (անպարկեշտ կիւն), ուսանողական հրապարակական խնճողքներով:—Թաղ, որի մէջ շատ անգամ ծագումն կոխներ ոստիկանութեան հետ և ուր գիշեր ժամանակ լինումէ այնպէս կենդանութիւն, ինչպէս և օրը ցերեկով: Փարիզեան ուսանողը քիչ է աշխատում, մանաւանդ իւր ուսանողութեան առաջին տարիները:

Գալով ըստ մեծի մասին գաւառից, ուր նա մինչև այդ ժամանակ տնկական կեանքով է աճել խիստ բուրժուական գերդաստանի մէջ, ստանալով ամիսը հարիւրից մինչև երեք հարիւր ֆրանկ, նա գլխովին անձնատուր է լինում փարիզեան կեանքին, հազիւ երբեմն այցելելով լսարանին (аудитория)։ Նա չապլ կեանք է վարում, անպարկեշտ կանանց հետ կապ է ունենում, կաքաւումէ և պարում անվայել շարժումներով (канканировать) Բիւլերի մօտ և ընդհանրապէս վարվումէ արտաքոյ կարգի թեթեամտութեամբ և անկարգութեամբ: Նայելով այս աղմկալից, գոռոզ գոչող, կատաղութեամբ անձնատուր եղած ամենատեսակ բաւականութիւնների փարիզեան երիտասարդութեան վերայ, դժուար է երեւակայել, որ այդ երիտասարդութեան միջից դուրս եկած լինին, Ժիւլ—Ֆաւրեր, Գամբետտաներ, կամ Շարկօ, Տէներ, կամ Թերծմներ, իսկ այդ ճշմարիտ այգապէս է: Աւատնելով հայրական զրամները, հրապարակական խնջոյքներում կատաղելով, կորցնելով առողջութեան կէսը գոգօթների գրկախառնութեանց մէջ, Փարիզի ուսանողը համեստանումէ և նստական աշխատանքով քանք է անում կորցրած ժամանակը վերագործնել: Գաւառացիները գալով Փարէզ գործով կամ զբօսնելու համար, զարհուրումն Փարիզի ուսանողների սանձարձակութիւնից, ևս առաւել, որ ուսանողը արդէն ճաշակելով փարիզեան կեանքը «Փարիզեցի անունով», սաստիկ ծաղրումէ գաւառացու նախաջրհեղեղեան ձևերը և նորա յետագիծութիւնը:

Փարիզի բնակիչների վերայ կարելի է համաթուել և օտար երկրացիներին, որոնք իւրաքանչիւր տարի ժողովվումն Փարիզի մէջ ահագին խուռն բազմութեամբ: Անգղիացիներ, Ռուսներ, Գերմանացիներ, Իսպանիացիներ, Իտալացիներ, Ամերիկացիներ, — ահա սովորաբար ումն էք պատահում լաւագոյն թաղերում: Գնալով Իտալական ծառադարձ զբօսարանով (бульваръ) դուք շատ անգամ կը լսէք Ռուսաց լեզուն, իսկ քանի մի քայլերից յետոյ դուք արդէն ունիք հնարաւորութիւն հիմնովին ուսանելու մաքուր Իսպանական լեզու: Այս ահագին օտար խուռն բազմութեամբ երկրացիներ, որոնք շատ անգամ վախճանաբար

բնակութիւն են հաստատում Գրանսիական մայրաքաղաքի մէջ, — Փարէզը դառնում է իսկապէս համաշխարհական քաղաք։ Աշխարհաքաղաքացիութիւն (КОСМОПОЛИТИЗМЪ) — ահա, ինչպէս լիվում է, ամենից աւելի իրական և երևելի յատկութիւնը ժամանակակից Փարիզի, չընայելով բոլոր նորա ազգային առանձնութիւնների վերայ։ Ժամանակակից եւրոպայի համար Փարէզը իսկ և իսկ այնպիսի դեր է խաղում, ինչպիսի դեր խաղում էր Հռոմը Հռովմայեցւոյ կայսրութեան համար և Աթէնքը այն ժամանակուայ քաղաքակրթութեամբ աշխարհի համար։ Այս է կենտրոնը մնաւորական և հոգեկան շահուց բոլոր եւրոպայի։

(Ե-ր-ն-է-լ)

(Թ-բ-) Զ. Տէր Զաքարեանց

Ա թ Ա Ն Ա Ս *) .

Խարտեաչ չքնաղ Աթենաս,
Է՞ր զիս խնամել ո՛չ անսաս.
Երբ տեսանես զիմ ջերմ իղձ,
Պարապել քո իմաստից,
Օրհնեսցի քո այրուբեն,
Որ միշտ սփոփէ զիմ հոգին.
Ա՛խ թէ չիցէ քո հանճար
Ազնիւ կենացս միայն ճար՝
Անշուշտ եղէց ես անբան,
Եզն լծեալ ի ցութան.
Եւ արորեսցէ ծաղկեալ տիս,
Եիմար փարթամն աշխարհիս.
Աս ի՞նչ պիտին գանձք և փառք,
Ոսկի, արծաթ ժանգահաւորք,
Եւ ինչ ուսմունք և արհեստք,
Զմարդն առնեն միայն մարդ։

(*) Ինչպէս հաղորդում է Տփղիսու Ա. Կարապետ եկեղեցւոյ միաբան Արժ. Յովհաննէս Քաչ. Տէր Յակովբեան այս երգը գրել է Տփղիսեցի հանդուցեալ Նիկողայոս Տէր Շմաւոնեան ի հանդէպ Ա. Թաղեաթեանցի « Խոթորակ » Աթոնոսի վերնադրով բանաստեղծութեան. երկու բանաստեղծութիւններն էլ հրատարակուած են 1847 թ. Ապրիլի 12 թ. Կովկասի Հայ Լրագրի 15 համարում։